

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՀՃՈՒ Հ/Կ) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ
Դր.-պրոֆ. Ա. Մութաֆյան (Փարիզ), Դր.-պրոֆ. Հ. Հոֆրիխտեր (Զայցերսլաուտերն), Դր.-պրոֆ. Մ. Բունեման-Հախնազարյան (Աախեն), Դր.-պրոֆ.
Հ. Սուրուզյան (Կահիրե), Դր.-պրոֆ. Լ. Չեքիյան (Վենետիկ), Դր.-պրոֆ. Պ. Չոբանյան (Երևան), Դր.-պրոֆ. Ա. Դազարյան (Մոսկվա),
Դր.-պրոֆ. Ն. Սարգսյան (Երևան), Մ. Լալայան (Երևան), Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), դր. Մ. Բալայան (Ստեփանակերտ)

НАУЧНЫЙ СОВЕТ ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ (ООИАА)
Др.-проф. А.Мутафян (Париж), Др.-проф. Г. Гофрихтер (Кайзерслаутерн), Др.-проф. М. Бунеман-Ахназарян (Аахен),
Др.-проф. Г. Сурузян (Каир), Др.-проф. Л. Зекиян (Венеция), Др.-проф. П.Чобанян (Ереван), Др.-проф. А. Казарян (Москва),
Др.-проф. Н. Саргсян (Ереван), М. Лалаян (Ереван), Ж. Манучарян (Лос-Анджелес), Др.-проф. М. Балаян (Степанакерт)

SCIENTIFIC COUNCIL OF RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE (RAA) ORGANISATION
Dr. A. Mutafian (Prof.), Paris; Dr. H. Hofrichter (Prof.), Kaiserslautern; Dr. Margrit Bunemann-Haghazarian (Prof.), Aachen; Dr. H.
Suruzian (Prof.), Cairo; Dr. L. Zekiyan (Prof.), Venice; Dr. P. Chobanian (Prof.), Yerevan; Dr. A. Ghazarian (Prof.), Moscow; Prof.
N. Sargissian, Yerevan; M. Lalayan, Yerevan; J. Manoucharian, Los Angeles, California; Dr. M. Balayan (Prof.), Stepanakert

Աշխատությունը հրատարակվում է ՀՃՈՒ Հ/Կ գիտական խորհրդի երաշխավորությամբ
Книга издается по рекомендации научного совета ООИАА
The publication of the present volume has been approved by RAA Scientific Council

ՀՃՈՒ Հ/Կ ԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
НАУЧНЫЕ ИССЛЕДОВАНИЯ ООИАА
RAA SCIENTIFIC RESEARCH SERIES

Գիրք ԺԲ
Книга 12
Volume 12

ԱՐՑԱԽԻ ԿԱՍՈՒՐՁՆԵՐԸ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

МОСТЫ АРЦАХА
САМВЕЛ КАРАПЕТЯН

THE BRIDGES OF ARTSAKH
SAMVEL KARAPETIAN

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE NGO

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ YEREVAN
2009

ՀՏԴ 72(479.25):941(479.25)
ԳՄԴ 85.113 (2Հ):63.3.(2Հ)
Կ - 294

Կ - 294 Կարապետյան Սամվել
Արցախի կամուրջները - Գիրք ժԲ - Եր.: Հայկական
ճարտարապետությունն ուսումնասիրող
կազմակերպություն, 2009, - 144 էջ

Աշխատությունը ներկայացնում է Պատմական Հայաստանի Արցախ նահանգում գտնվող 98 կամուրջների պատմությունն ու ճարտարապետությունը:

Հասցեագրվում է հայ ճարտարապետության և պատմության խնդիրներով հետաքրքրվող մասնագետներին և ընթերցող լայն հասարակությանը:

Книга представляет историю и архитектуру 98 мостов, находящихся в Арцахской провинции Исторической Армении.

Адресована специалистам, интересующимся армянской историей и архитектурой, а также широкому кругу читателей.

The work treats the history and architecture of 98 bridges located in Artsakh Province of Historical Armenia.

Intended for the general reader and specialists interested in Armenian history and architecture.

ՀՏԴ 72(479.25):941(479.25)
ԳՄԴ 85.113 (2Հ):63.3.(2Հ)

Նվիրվում է Հայկական
ճարտարապետությունն ուսումնասիրող
հասարակական կազմակերպության հիմնադիր-նախագահ,
ճարտ. դր. Արմեն Հախնազարյանի
հիշատակին

Посвящается памяти
учредителя—председателя Общественной Организации
по Изучению Армянской Архитектуры (РАА),
д-ра арх. Армена Ахназаряна

Dedicated to the memory
of Doctor of Architecture Armen Haknazarian,
Founding Director
of Research on Armenian Architecture NGO

Հրատարակության հովանավոր
ԼՂՀ կառավարությանն առընթեր
գրուսաշրջության վարչություն

Спонсор издания
Управление по туризму при правительстве НКР

RMK Government's Tourism Department
Financial supporter of the publication of the present work

Բովանդակություն

Նախաբան 7	Ներքի Իգյակուց կամուրջ 83
Արցախի կամուրջների տեղաբաշխման քարտեզ 13	Ինը Մասանց անապատի կամուրջ 84
Սևակնի կամուրջ 14	Չախլիկ (Ճրղացաձորի) կամուրջ 86
Խաղխաղի կամուրջ 15	Մելիքի կամուրջ 88
Պարտավի կամուրջ 18	Հին Թաղասեռի կամուրջ 90
Քարավազի Հին (Խուղափերինի) կամուրջ . . 19	Հոնուտի կամուրջ 92
Շամբորի կամուրջ 22	Գյուլիստանի կամուրջ 94
Ջոխտակ կամուրջ 22	Քարաղբյուրի կամուրջ 95
Աշոտ Երկաթի կամուրջ 23	Քարե կամուրջ 96
Կատոսավանքի կամուրջ 24	Մելիք Մնացականի կամուրջ 97
Գլամբարի կամուրջ 25	Եկեղեցաձորի (Քիլիսադարայի) կամուրջ . . 98
Գառնակերի կամուրջ 25	Եսայու կամուրջ 99
Քարավազի Նոր (Խուղափերինի) կամուրջ . 26	Մազի կամուրջ 100
Հին Գանձակի Վերին կամուրջ 29	Յանցի կամուրջ 102
Ջրվշտիկի (Մազի) կամուրջ 30	Հալիվորի կամուրջ 104
Կոտրած կամուրջ 32	Սիմոնենց կամուրջ 106
Անանուն կամուրջ 35	Թաղեռսի կամուրջ 108
Չափնիի կամուրջ 36	Լալազարի կամուրջ 110
Չիասարի կամուրջ 38	Շենի կամուրջ 114
Հին Գանձակի Միջին կամուրջ 40	Գանձակի նոր կամուրջ 115
Հին Գանձակի Ներքին կամուրջ 41	Ներքի Հանդի կամուրջ 116
Գետավանի կամուրջներ 42	Շամբորի Նոր կամուրջ 116
Խաթրավանքի կամուրջ 44	Թարգմանչաց վանքի կամուրջ 117
Լևի կամուրջ 45	Գյուրգյուռ կամուրջ 118
Խոջամիսաքի կամուրջ 46	Հելենենդորֆի կամուրջ 120
Դաղիվանքի կամուրջ 46	Գարի (Գարինի, Գարեզինի) կամուրջ 121
Մազի կամուրջ 48	Ստեփանի կամուրջ 121
Յրտնոտի կամուրջ 50	Բաղերի կամուրջ 121
Ջարվանեսի կամուրջ 52	Բարսումչենի կամուրջ 122
Շրվականի կամուրջ 54	Ալվանանց կամուրջ 122
Տահիսի կամուրջ 56	Մակուն կամուրջ 123
Տանձուտի (Չանախչի) կամուրջ 58	Առաջաձորի կամուրջ 124
Հայկազն (Երի Իգյակուց) կամուրջ 58	Շենի (Ծամձորի) կամուրջ 125
Պառավի կամուրջ 60	Տերի (Տերունց) կամուրջ 126
Գանձակի կամուրջ 62	Քարե (Հաթամի, Մուրութանց) կամուրջ . . . 126
Անանուն կամուրջ 62	Քչաղբյուրի կամուրջ 127
Բրուտանց կամուրջ 63	Բանանցի կամուրջներ 128
Չանաղչուձորի (Քյոփրի գյոզի) կամուրջ . . 63	Մազի (Գետի Գոմերի) կամուրջներ 129
Վերին Քարհատի կամուրջ 64	Քարե կամուրջ 132
Թուփի կամուրջ 66	Երկաթավորքի կամուրջ 132
Ջասատի (Դավթի) կամուրջ 67	Սուլուքի կամուրջ 134
Ավետարանոցի կամուրջ 67	Սմբոտանի (Տրեխների կապ) կամուրջ 135
Մահտեսի Արանի կամուրջ 68	Չորին խաչի կամուրջ 136
Ակնաղբյուրի կամուրջ 70	Հակի կամուրջ 138
Բանանցի Մեծ (Հին) կամուրջ 72	Հովսեփի կամուրջ 139
Բոլորանցի կամուրջ 75	Բերդաձորի կամուրջ 139
Գողթանիկի կամուրջ 76	Արցախի կամուրջները: Համառոտ տվյալների աղյուսակ 140
Հոցկոտի կամուրջ 78	Չափագրություններ 142
Խռոված կամուրջ 80	Լուսանկարներ 142
Ներքիչենի կամուրջ 82	Օգտագործված գրականության ցանկ 143

Содержание

Предисловие	9	Мост Инн Масанц анапати.....	84
Карта расположения мостов Арцаха	13	Мост Дзахлик (Чргацадзора).....	86
Мост Севакна	14	Мост Мелика.....	88
Мост Хаххага	15	Мост Хин Тагасера.....	90
Мост Партава	18	Мост Хонуга	92
Мост Караваз (Худаферин) Хин.....	19	Мост Гюлистана	94
Мост Шамкора.....	22	Мост Карахбюр.....	95
Мост Джохтак.....	22	Мост Карэ	96
Мост Ашота Ерката.....	23	Мост Мелика Мнацакана	97
Мост Катосаванка.....	24	Мост Екехецадзор (Килисадара).....	98
Мост Гламбара.....	25	Мост Есайя.....	99
Мост Гарнакера	25	Мост Мази.....	100
Мост Караваз (Худаферин) Нор.....	26	Мост Янци.....	102
Мост Хин Гандзака Верин.....	29	Мост Халивор.....	104
Мост Джрвштика (Мази)	30	Мост Симоненц.....	106
Мост Котрац.....	32	Мост Тадеоса	108
Безымянный мост	35	Мост Лалазара.....	110
Мост Чапни	36	Мост Шена.....	114
Мост Дзиасара.....	38	Мост Гандзака Нор	115
Мост Хин Гандзака Миджин.....	40	Мост Нерки Ханд	116
Мост Хин Гандзака Неркин.....	41	Мост Шамкора Нор	116
Мосты Гетавана	42	Мост монастыря Таргманчац.....	117
Мост Хатраванка	44	Мост Гюргюр.....	118
Мост Лева	45	Мост Хеленендорфа	120
Мост Ходжамисака	46	Мост Гари (Гарина, Гарегина).....	121
Мост Дадиванка	46	Мост Стефана.....	121
Мост Мази.....	48	Мост Багера	121
Мост Цртнота.....	50	Мост Барсумшена	122
Мост Джарванеса	52	Мост Аслананц	122
Мост Шрвакана	54	Мост Макун	123
Мост Тагиса	56	Мост Арачадзора	124
Мост Тандзута (Чанахчи).....	58	Мост Шена.....	125
Мост Айказн (Ери Игякуц).....	58	Мост Тери (Терунц).....	126
Мост Парави.....	60	Мост Карэ (Хатами, Мурутанц)	126
Мост Гандзака.....	62	Мост Кчахбюр.....	127
Безымянный мост	62	Мосты Бананца.....	128
Мост Брутанц	63	Мосты Мази (Гети гомера)	129
Мост Чанахчудзор (Кепри Гези)	63	Мост Карэ	132
Мост Верин Кархата	64	Мост Еркатаворка.....	132
Мост Топа.....	66	Мост Сулука	134
Мост Джасата (Давида).....	67	Мост Смботана (Трехнери кап).....	135
Мост Аветараноца.....	67	Мост Дзорин Хач.....	136
Мост Махтеса Арана.....	68	Мост Хака.....	138
Мост Акнахбюра.....	70	Мост Овсепа	139
Мост Бананца Мец (Хин).....	72	Мост Бердадзора	139
Мост Болоранца	75	Мосты Арцаха. Таблица кратких данных.....	140
Мост Гохтаника	76	Обмеры	142
Мост Хгцкот	78	Фотографии.....	142
Мост Хровац.....	80	Список использованной литературы...143	
Мост Неркишена.....	82		
Мост Нерки Игякуц.....	83		

Contents

Introduction	11	Bridge of Nerki Igyakoots	83
Location Map of Artsakh Bridges	13	Bridge of the Cloister of Inn Masants	84
Sevakh Bridge	14	Dzakhlik (Jerghatsadzor) Bridge	86
Bridge of Khaghkhagh	15	Bridge of Melik	88
Bridge of Partav	18	Bridge of Hin Taghaser	90
Older Bridge of Karavaz (Khudaperin)	19	Bridge of Honut	92
Bridge of Shamkor	22	Bridge of Gyulistan	94
Jokhtak Bridge	22	Bridge of Karaghbyoor	95
Bridge of Ashot Yerkat	23	Kare (Stone) Bridge	96
Bridge of Katosavank	24	Bridge of Melik Mnatsakan	97
Bridge of Glambar	25	Bridge of Yekeghetsadzor (Kilisadara)	98
Bridge of Garnaker	25	Bridge of Yesayi	99
New Bridge of Karavaz (Khudaperin)	26	Mazi Bridge	100
Upper Bridge of Hin Gandzak	29	Yants Bridge	102
Bridge of Jerveshitik (Mazi)	30	Bridge of Halivor	104
Kotratz (Broken) Bridge	32	Simonents Bridge	106
Nameless Bridge	35	Bridge of Tadevos	108
Bridge of Chapni	36	Bridge of Lalazar	110
Bridge of Dziasar	38	Bridge of Shen	114
Middle Bridge of Hin Gandzak	40	New Bridge of Gandzak	115
Lower Bridge of Hin Gandzak	41	Bridge of Nerki Hand	116
Bridges of Getavan	42	New Bridge of Shamkor	116
Bridge of Khatravank	45	Bridge of Targmanchats Cloister	117
Bridge of Lev	45	Bridge of Gyurgyur	118
Bridge of Khojamisak	46	Bridge of Helenendorf	120
Bridge of Dadivank	46	Bridge of Gar (Garin, Garegin)	121
Mazi Bridge	48	Bridge of Stepan	121
Bridge of Tsertnot	50	Bridge of Bagher	121
Bridge of Jarvanes	52	Bridge of Barsumshen	122
Bridge of Shervakan	54	Aslanants Bridge	122
Bridge of Tahis	56	Makun Bridge	123
Bridge of Tandzut (Chanakhchi)	58	Bridge of Arajadzor	124
Bridge of Haykazn (Yeri Igyakoots)	58	Bridge of Shen	125
Paravi (Old Woman's) Bridge	60	Bridge of Ter (Terunts)	126
Bridge of Gandzak	62	Kare (Hatam's, Murutants) Bridge	126
Nameless Bridge	62	Bridge of Kchaghbyoor	127
Brootants (Potters') Bridge	63	Bridges in Banants	128
Bridge of Chanaghchudzor (Kyopri Gyozy)	63	Bridges Named Mazi (Geti Gomeri)	129
Bridge of Verin (Upper) Karhat	64	Kare (Stone) Bridge	132
Bridge of Top	66	Bridge of Yerkatavork	132
Bridge of Jasat (David)	67	Bridge of Suluk	134
Bridge of Avetaranots	67	Bridge of Smbotan (Bast Shoe Strings)	135
Bridge of Mahtesy Aran	68	Bridge of Dzorin Khach (Cross of the Gorge)	136
Bridge of Aknaghbyoor	70	Bridge of Hak	138
Metz (Hin) Bridge of Banants	72	Bridge of Hovsep	139
Bridge of Bolorants	75	Bridge of Berdadzor	139
Bridge of Goghtanik	76	The Bridges of Artsakh. Table of Reference	140
Bridge of Heghetskot	78	Measurements	142
Khrovatz (Indignant) Bridge	80	Photographs	142
Bridge of Nerkishen	82	References	143

ՆԱԽԱԲԱՆ

Հազարամյակների ընդգրկում և բազմազան գործառություն ունեցող հայ ճարտարապետության անհամար հուշարձանների շարքում աշխարհացույցյան կամ Պատմական Հայաստանի տարածքում իրենց ուրույն տեղն ունեն կամուրջները:

Չորս գլխավոր գետերի և նրանց բյուրավոր վտակների ցանցով պատված Հայկական լեռնաշխարհի քաղաքներն ու գյուղերը հնագույն ժամանակներից ի վեր հաղորդակցվել են մեծ ու փոքր գետերը հաղթահարած բազմահորինվածք կամուրջներով:

Ինչպես գավառային, նահանգային կամ միջպետական ճանապարհները, այնպես էլ դրանց սպասարկող կամուրջներն ունեին համապատասխան կարևորություն: Ճիշտ այս հանգամանքի պատճառով տարանցիկ ճանապարհներին գտնվող կամուրջները, օրինակ, իրենց ճարտարապետական հորինվածքով հարկադրված էին ապահովել մաս մաքսատան գործառույթը, որով էլ պայմանավորված՝ այդօրինակ կամուրջներն իրենց ներսում ունեցել են պահակների և մաքսավորների համար նախատեսված սենյակներ, մինչդեռ տարանցիկ ճանապարհներից դուրս գտնվող կամուրջները, անկախ իրենց չափերից, զուրկ են եղել հորինվածքային նշյալ հավելումներից:

Հուշարձանագիտության ոլորտին նվիրված աշխատությունների քննությունը ցույց է տալիս, որ մասնավորապես կամրջաշինության բնագավառը մասնագետների ուշադրությանը համեմատաբար ավելի քիչ է արժանացել: Բավական է նշել, որ ներկայիս Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնվող միջնադարյան կամուրջների ամենամեծ խումբը ներկայացնող արդեն շուրջ կեսդարյա վաղեմություն ունեցող աշխատությունը պարունակում է ընդամենը շուրջ 4 տասնյակ խնդրո առարկա հուշարձան. «Այժմ նրանցից Սովետական Հայաստանի տերիտորիայում պահպանվել են կանգուն, կիսավեր կամ չնչին մնացորդների ձևով, միջնադարին և ուշ միջնադարին վերաբերող 40-ի չափ հուշարձաններ»¹:

Բնագավառը շոշափել են ընդհանուր բնույթի ուսումնասիրությունների այլ հեղինակներ ևս²:

Սույն հատորը ներառում է Պատմական Հայաստանի Արցախ նահանգի տարածքում արձանագրված ինչպես կանգուն կամ մասամբ պահպանված, այնպես էլ վաղուց անհետացած 98 միավոր հուշարձան:

Համոզված ենք, որ ներկայացված նմուշների ցանկը հետագա հետազոտությունների շնորհիվ դեռևս կարելի է լրացնել:

Հայաստանի այլ տարածաշրջանների նմանությամբ արցախյան կամուրջների շարքում նույնպես գերակշռում են միաթռիչք հորինվածք ունեցողները, որոնք հուսալիորեն իրար են միացրել գետահովիտների կամ կիրճերի՝ սովորաբար բնությունից տեղանքով առավել սեղմված հակադիր կողմերը:

Ժամանակի փորձությունը, սակայն, ցույց է տվել, որ հարատևել են հատկապես այն կամուրջները, որոնց խելերը խարսխված են եղել բնականից աներեր առափնյա ժայռազանգվածների վրա, և, ընդհակառակը, կործանվել են, երբ խելերից թեկուզ մեկը չի ունեցել ժայռեղեն պատվանդան: Ասվածի ապացույցն են քանդված այն բազմաթիվ կամուրջները, որոնց երբեմնի գոյությունն այժմ փաստվում է գետի որևէ կողմում առկա խելի մնացորդներով՝ այն էլ բնական ժայռազանգվածին անպայմանորեն հաստատված:

¹ **Հարությունյան Վ.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 69: **Գասպարյան Մ.**, ՀՍՍՀ-ի կամուրջները, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1987, № 2, էջ 205-208:

² **Шуцев П.**, Мосты и их архитектура, Москва, 1953, с 176-182, 188. Ի դեպ, Շչուսևը ողջ աշխարհի կամուրջներին նվիրված իր աշխատության մեջ ներկայացրել է ՀԽՍՀ և Նախիջևանի ԻՀ տարածքում պահպանված հայկական շուրջ 2 տասնյակ կամուրջ:

Տեղանքի ընտրության միևնույն սկզբունքն առանցքային է եղել նաև երկթռիչք, եռաթռիչք և բազմաթռիչք կամուրջների հորինվածքներում:

Տեղին է նշել, որ գետերի հոսանքները ջրից դուրս ցցված բնական ժայռազանգվածների օգնությամբ հաղթահարելու հարմարություն ունեցող տեղանքը արցախյան խոսվածքում ցարդ անվանվում է «քարավազ» (օր. «գետն անցնելու քարավազ տեղ կա»): Այս բարդ բառի բաղադրիչներն են քար և վազ բառարմատները, իսկ սրանց միաձուլումից ծնված «քարավազ» հասկացությունը խոսում է տեղանքում քարերի վրայով վազ տալու (վազելու) հարմարության առկայության մասին:

Ուշագրավ է, որ քարավազ բառն իր նույնական իմաստով գործածական է եղել դեռևս միջին դարերում, ընդ որում, երբեմն վերածվել է նաև հատուկ անվան: Ասվածի վառ օրինակն է Արաքսի քարավազ վայրերից մեկում կառուցված հռչակավոր այն կամուրջը, որն արդեն ԺԳ դարում վկայվել է Քարավազի կամուրջ հատուկ անվամբ (այս կամուրջն ուշ միջնադարում ավելի հայտնի էր Խուդափեթին անունով):

Արցախյան կամուրջների հիմնական շինանյութը կրաշաղախով միաձուլված անմշակ և կիսամշակ քարն է, սակայն մեզ են հասել նաև աղյուսի համադրմամբ իրականացված կամուրջներ (օր. Խաղխաղի, Քարավազի Նոր, Գանձակի և այլն): Մինչդեռ նույնիսկ վերջիններիս դեպքում կամրջախելերի հիմքերը շարված են բացառապես քարով: Հարկ է նկատել նաև, որ աղյուսի կիրառմամբ կառուցված արցախյան բոլոր կամուրջները գտնվում են երկրամասի դաշտավայրային քարազուրկ շրջաններում, ուստի տվյալ պարագայում աղյուսի կիրառումը թելադրված է եղել ոչ թե շինանյութի այդ տեսակի որակական առավելություններով, այլ պարզապես հարթավայրային գոտում դիմացկուն քարատեսակների իսպառ բացակայությամբ: Ինչ վերաբերում է արցախյան կամուրջների շարվածքում սրբատաշ քարի հազվադեպ երևույթին, ապա սա էլ բացատրվում է տեղական քարատեսակների որակական հատկանիշներով (Արցախը որքան հարուստ է կրաքարով և ավազաքարով, նույնքան աղքատ է բազալտի և գրեթե զուրկ՝ տուֆի հանքավայրերից), որոնց մշակման գաղտնիքներին գերազանցորեն տիրապետող արցախցի քարգործ վարպետները, որպես կանոն, մախրնտրում էին դրանք գործածել անմշակ կամ կիսամշակ վիճակում: Մակավաղեպ հանդիպող սրբատաշ շարն իրականացված ենք տեսնում կամուրջների միայն թաղակիր հատվածում, այն էլ առավելաբար միայն կամարի անկյունաքարերում:

Հատկապես 5-6 մետրից ավելի թռիչք ունեցող կամուրջների պարագայում թաղի ծանրությունը միայն կամարի վրա չծանրացնելու համար արցախցի կամրջաշինարարներն օգտագործել են նաև Հայաստանի այլ նահանգներում հանդիպող կամուրջների շինարարական հնարքները, այն է՝ կրկնականարի կիրառումը: Ինչ վերաբերում է խելերի դիմակայունությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկված միջոցներին, ապա դրանցում աչքի է ընկնում խելերի միակողմ կամ երկկողմ, հատակագծում կիսաբոլորակ աշտարակ հիշեցնող հենապատերի (կոնտրֆորս) առկայությունը:

Բազմաթռիչք կամուրջների դեպքում էլ գետամիջի խելերը գետի հոսքընդդեմ ճակատում ապահովվել են ջրի դիմահար ալիքներն ավելի հեշտությամբ ճեղքելուն միտված սրանկյուն ավարտ ունեցող հենապատերով: Սրանց հատակագծում կիսաշրջան տարբերակներով էլ սովորաբար ամրացվել են խելերի հոսքընթաց ճակատները:

Կամուրջների թվագրման խնդրի առնչությամբ հարկ է նշել, որ դրանց միայն փոքր մասի վերաբերյալ շինարարական արձանագրություններ կամ գրավոր այլ վկայություններ պահպանված լինելու պարագայում, հարկավ, կառուցման ժամանակը հնարավոր է որոշել կառուցողական զանազան առանձնահատկությունների քննության շնորհիվ, որով և առաջնորդվել ենք սույն աշխատության մեջ:

Ակնառու է մեկ հանգամանք ևս. մեզ հասած արցախյան կամուրջներն իրենց ճնշող մեծամասնությամբ աշխարհ են եկել ազգային իշխանության գոյության պայմաններում:

ПРЕДИСЛОВИЕ

Среди бесчисленных памятников армянской архитектуры, имеющих “многотысячелетний” охват и многообразные функции, на территории исторической Армении (или Армении по “Ашхарацуйц”-у) свое особое место занимают мосты.

Города и села Армянского нагорья, покрытого сетью четырех главных рек и их неисчислимых притоков, с древнейших времен сообщались друг с другом через многокомпозиционные мосты, преодолевавшие большие и малые реки.

Соответственную важность представляли как провинциальные, областные или межгосударственные дороги, так и обслуживавшие их мосты. Именно по этой причине мосты, расположенные на транзитных дорогах, например, по архитектурной композиции были вынуждены обеспечивать также таможенные функции, вследствие чего подобные сооружения имели помещения для сторожевых и таможенников; между тем как мосты, находящиеся вне транзитных дорог, независимо от их размеров, были лишены таковых композиционных дополнений.

Анализ трудов, посвященных сфере изучения памятников, показывает, что в частности область строительства мостов сравнительно меньше удостоивалась внимания специалистов.

Достаточно отметить, что труд почти пятидесятилетней давности, в котором представлена самая большая группа средневековых мостов, расположенных в пределах Республики Армения, содержит всего примерно 4 десятка подобных памятников: “Ныне из их числа на территории Советской Армении в сохранном, полуразрушенном состоянии или в виде незначительных остатков сохранилось около сорока памятников, относящихся к средневековью и позднему средневековью”¹.

Эта область затрагивалась также и другими авторами исследований общего характера².

Сей том охватывает 98 единиц как сохранившихся полностью или частично, так и давно исчезнувших памятников, зафиксированных на территории провинции Арцах Исторической Армении.

Мы убеждены, что список представленных образцов можно будет дополнить благодаря последующим исследованиям.

Подобно другим регионам Армении, среди арцахских мостов, также, преобладают однопролетные сооружения, которые (в свое время) надежно соединяли друг с другом противоположные стороны долин и ущелий, обычно наиболее сжатых природой местностью.

Однако, испытание времени показало, что выстояли особенно те мосты, опоры которых были возведены на прибрежных, от природы незыблемых скальных массивах, и наоборот, рушились те, у которых хотя бы одна из опор не стояла на скальном основании. Доказательством к сказанному являются те многочисленные мосты, о былом существовании которых свидетельствуют остатки опор на одном из берегов, причем обязательно покоящихся на природном скальном грунте.

¹ Арутюнян В., Каравансарай и мосты средневековой Армении, Ереван, 1960, с. 69. Гаспарян М., Древние мосты Арм. ССР, “Вестник Ереванского Университета”, 1987, № 2, с. 205-208 (на арм. яз.).

² Щусев П., Мосты и их архитектура, Москва, 1953, с. 176-182, 188. Кстати, Щусевым в его труде, посвященном мостам всего мира, представлены около 2-х десятков армянских мостов, сохранившихся на территории Армянской ССР и Нахичеванской Автономной Республики.

Одинаковый принцип выбора местности оставался стержневым и в случаях двухпролетных, трехпролетных и многопролетных композиций.

Уместно заметить, что те места на реках, которые были удобны для преодоления течения, благодаря выступающим из воды скальным глыбам, по-ныне на арцахском наречии называются “караваз”, т.е. “место пробега по камням” (некий аналог русского “брода”)³. Компонентами этого сложного слова являются “кар” (“камень”) и “ваз” (“бег”), а понятие от слияния этих корней говорит о наличии удобства “пробега” по этим камням речной местности. Примечательно то, что слово “караваз” применялось еще в средневековье, причем, иногда также в качестве собственного имени. Ярким примером сказанному является тот знаменитый мост, построенный в одном из подобных “бродных” мест, который еще в 13-ом веке назывался собственным именем Каравази (этот мост в более поздние времена был известен под названием Худаферинского).

Основным стройматериалом арцахских мостов являлся необработанный и полубра-ботанный камень на известковом растворе. Однако, до нас дошли также мосты, возведенные с сочетанием кирпича (напр. Хаххаги, Каравази Нор, Гандзаки и т.д.). При этом, даже в случаях этих последних, их опоры выложены исключительно из камня. Следует заметить также, что все арцахские мосты, построенные с применением кирпича, находятся в равнинных, лишенных камня районах края. Поэтому, при данных обстоятельствах применение кирпича было продиктовано не качественными преимуществами этого вида стройматериала, а попросту полным отсутствием стойких разновидностей камня в равнинной зоне. Что касается редкого явления гладко тесаного камня в кладке, то это объясняется качественными свойствами местных видов камня (насколько богат Арцах известняком и песчаником, настолько и беден он базальтом и почти лишен месторождений туфа). Арцахские мастера-каменщики, которые отлично владели секретами обработки местных камней, как правило, предпочитали применять их в необработанном или полубра-ботанном состоянии. Гладко тесаную кладку мы очень редко встречаем лишь в местах арочных сводов, да и то, в основном, только на краеугольных камнях арки.

В частности, в случаях мостов с пролетом свыше 5-6 метров, для того, чтобы не нагружать тяжестью свода только арку, арцахские мостостроители применяли строительный прием использования двойной арки, который встречается также в других областях Армении. Что касается средств повышения стойкости опор, то в них бросается в глаза наличие односторонних или двусторонних контрфорсов опор, напоминающих в плане полукруглые башни.

В случае многопролетных мостов также, водные опоры со стороны “потокопротивного”⁴ фасада обеспечивались контрфорсами с заостренными углами для облегчения рассечения речных волн. Такими же, но в плане полукруглыми вариантами обычно укреплялись “потоконаправленные”⁵ фасады опор.

В связи с вопросом датирования мостов, следует заметить, что в случае наличия строительных надписей (сохранившихся лишь на некоторых мостах) или иных письменных свидетельств, это, безусловно, возможно осуществлять благодаря изучению различных строительных особенностей, коим мы и руководствовались в сем труде.

Очевиден также один факт: дошедшие до нас арцахские мосты, в своем подавляющем большинстве, появились на свет в условиях существования национальной власти.

³ Пояснение переводчика.

^{4, 5} Эти оба термина предлагаются переводчиком сего текста, спец. редактором С. Мкртчяном.

INTRODUCTION

The bridges found throughout the territory of Historical Armenia—as specified in the *Ashkharatsuyts*, an Armenian manual on cosmology and geography with an atlas attached—have their unique place in the midst of the countless specimens of Armenian architectural heritage that come from the depths of many millennia and were created to perform different functions.

Since times bygone, the towns and villages of the Armenian Highland—that is covered with a network of four major rivers and their numerous tributaries—have communicated with each other by means of bridges of different compositions erected to withstand the currents of large and small rivers.

It is common knowledge that highways are generally classified into inter-district, inter-regional, or inter-state ones according to their significance. Similarly, bridges that form part of the infrastructure securing their functioning may be subjected to the same grouping. Thus, for instance, bridges located on transit roads used to fulfill the role of a custom-house, and for this purpose, they were originally designed to have a corresponding composition—bridges of this type have inner rooms intended for guards and customs officers. In contrast to them, bridges lying beyond transit roads do not have these additional elements of composition, irrespective of their dimensions.

Research into the existing works relating to the field of Monumentology reveals that so far specialists have not paid due attention to the sphere of bridge building. Suffice it to point out that one of them, published around half a century ago and considered to embrace the largest group of medieval bridges situated within the borders of the present-day Republic of Armenia, actually dwells upon only over forty of the monuments in question: “Currently about 40 of them—attributed to the Middle Ages and the late medieval period—can be found in the territory of Soviet Armenia; some of them are preserved standing, others being semi-ruined, or reduced to meagre remnants.”¹

The field of bridge building is known to have been studied by other researchers as well.²

The present work enlarges on 98 bridges located in the territory of Artsakh Province of Historical Armenia; some of them are recorded as standing; others as partly preserved, or completely lost in the depth of time.

We are of the conviction that the list of specimens included in this work can be subsequently enriched thanks to further research in this domain.

Like other parts of Armenia, Artsakh has predominantly single-span bridges which reliably connect the opposite sides of river valleys, or gorges where the terrain is cramped.

It is evident that the test of time is overcome by especially those bridges that have piers resting on firm natural rocks towering on river banks. Unlike them, in cases where even one of the piers did not have a rocky base, the bridge proved vulnerable and was reduced to ruins in the course of time. This statement may be substantiated by the remains of a great many bridge piers that are found on river-sides necessarily resting on natural blocks of rock. The same principle of terrain

¹ **Harutiunian, V.** The Caravanserais and Bridges in Medieval Armenia. Yerevan, 1960, p. 69; **Gasparian, M.** The Old Bridges of the Soviet Socialist Republic of Armenia. In: *Banber Yerevani Hamalsarani*, 1987, No. 2, pp. 205-208 (the originals in Armenian).

² **Shchusev, P.** Bridges and Their Architecture. Moscow, 1953, pp. 176-182, 188 (the original in Russian). Shchusev's work, that is devoted to bridges found all over the world, also includes over twenty Armenian bridges located in the Soviet Republic of Armenia, and in the Autonomous Republic of Nakhijevan.

selection was of pivotal importance in the elaboration of the compositions of double-span, three-span and multi-span bridges as well.

In the vernacular of Artsakh, the area where it is possible to resist the river current with the help of natural rocks protruding from the water is called *karavaz*, the word deriving from the roots '*kar*,' i.e. '*stone*,' and '*vazk*,' i.e. '*running*,' and meaning the possibility of crossing the given piece of land by running over stones.

It is interesting to note that the word '*karavaz*' was used in this sense as early as the Middle Ages, sometimes even turning into a proper name. An eloquent proof of this is a well-known bridge erected over the river Arax, at a point that may be described by means of the word '*karavaz*.' As of the 13th century, it was already being mentioned by the name of *Karavaz* (in the late Middle Ages, it was better known as bridge of Khudaperin).

The bridges of Artsakh are mostly built of undressed and semi-finished stones laid together with mortar, although we also see blocks of brick in some of those that have come down to us—the bridges of Khaghkhagh, Gandzak, Karavaz (the new one), etc. It should be mentioned, however, that even where the bridge is constructed of brick, the foundations of its piers are laid exceptionally with stone. Another fact to be stressed is that all the brick bridges of Artsakh are located in those parts of the region that represent plains lacking stone; consequently, the use of brick was warranted not by the fineness of this kind of construction material, but simply by the total absence of durable stone in the flat country. As for the rare application of finely-finished stone in the masonry of Artsakh bridges, this is explained by the quality of local stones—although the region abounds in limestone and sandstone, it is poor in basalt and has almost no reserves of tufa. The masters of Artsakh had perfect command of the finishing secrets of the stones available in their region, but they preferred to use them either in undressed, or semi-finished state. Finely-dressed stonework is found only in the vault-bearing parts of bridges, and that mostly in the cornerstones of arches.


For bridges with spans exceeding 5 to 6 metres in length, the masons of Artsakh used a double row of stonework in the arch to avoid overburdening it with the weight of the vault—a building technique that is also manifest in bridges situated in other provinces of Armenia. Another method of construction was the erection of counterforts—reminding of semi-circular towers in plan—on either, or both sides of the piers for their additional firmness.

The piers of multi-span bridges usually have pointed buttresses planned to more easily withstand the waves in that facade of the pier that overlooks the upward movement of the water. The pier facades overlooking the downward current of the river are strengthened by similar counterforts that are semi-circular.

Another important issue in research into bridges is their dating, which is carried out with the help of preserved construction inscriptions, or other written records. We have attempted to specify the exact foundation time of certain bridges by using these sources, and also analysing their building and composition peculiarities.

Finally, we would like to stress that the overwhelming majority of the preserved bridges of Artsakh were erected thanks to the existence, and in the times, of ruling powers that were deeply national in their actions and policies.

ԱՐՇԱԽԻ ԿԱՍՈՒՐՁՆԵՐԸ THE BRIDGES OF ARTSAKH



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՃԱՆՆԵՐ
LEGEND**

-  Կանգուն կամուրջ
Standing bridge
-  Ավերված կամուրջ
Ruined bridge

ՍԵՎԱԿՆԻ ԿԱՄՈՒՐՁ

Գտնվում է Արցախի Դիզակ և Վարանդա գավառների սահմանագծին՝ Քոնդալան գետի վրա՝ Ի դարի սկզբներին Ջեբրայիլ գավառի միակ տակավին ռուսաբնակ Ղարաբուլաղ գյուղի հարևանությամբ: Հակառակ կամրջի խոր հնության՝ գրավոր աղբյուրներում բազմաթից այս կամրջի մասին առաջին վկայությանը հանդիպում ենք միայն 1902 թ. «Ռուսական-Ղարաբուլաղից 2-3 վերստ հեռավորության վրա հոսում է Քոնդալան-չայ գետը: Գետից երկու սաժեն հեռու գտնվում են խիտ խտտով ծածկված քարե մի կամրջի մնացորդներ: Այդ կամրջի ծագումը թաքնված է պատմական ժամանակների մթությանը, իսկ տեղի բնակչության մոտ կառույցի ժամանակաշրջանի վերաբերյալ ոչ մի որոշակի ավանդություն չի պահպանվել: Ոմանք ասում են, որ այն իբր կառուցվել է Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Արաքս գետի Խուդափերին հին կամրջի հետ միաժամանակ, մյուսները կառույցը վերագրում են ինչ-որ Բահման քազավորին: Գետի նկատմամբ կամրջի գրաված դիրքից կարելի է եզրակացնել, որ այն կառուցվել է մի գետի վրա, որը ժամանակի ընթացքում փոխել է իր հունը, որի հետևանքով կամուրջը մնացել է գետի եզրին, իսկ կամրջի մերձակայքում բնակավայրերի բացակայության շնորհիվ այն փրկվել է մարդկային ձեռքերով վերջնական ավերումից: ...Ստույգ է, սակայն, որ ինչպես այս, այնպես էլ Խուդափերինի կամուրջը կառուցել է Շահ-Աբաս Մեծը...»¹: Վկայությունից թերևս կարելի է եզրակացնել, որ կամուրջը կառուցվել է մեր թվարկությունից առաջ Գ-Գ դարերում և վերանորոգվել դարեր անց՝ ԺԷ դարում:

¹ **Сегаль И.**, Елисаветопольская губерния. Впечатления и воспоминания, “Кавказский вестник”, Тифлис, 1902, № 5, с. 31.

МОСТ СЕВАКНА

Находится в пограничной зоне провинций Арцаха Дизак и Варанда, на реке Кондалан, по соседству с единственным все еще руссконаселенным в начале 20-го века села Карабулах в Джебраильской провинции. Вопреки глубокой древности этого моста, первые упоминания в письменных источниках об этом многопролетном сооружении мы встречаем лишь в 1902 году: “Верстахъ въ 2-3 отъ Карабулага-русскаго, протекаетъ река Канделанъ-чай. Сажень въ двухъ отъ реки находятся остатки каменнаго моста, обросшие густою травой. Происхождение этого моста кроется во мраке времени историческихъ, и въ местномъ населении не сохранилось относительно времени построения его никакихъ определенныхъ преданий: одни говорятъ, что онъ построенъ въ одно время съ весьма древнимъ Худаферинскимъ мостомъ на Араксъ, сооруженномъ будто-бы Александромъ Македонскимъ, другие приписываютъ постройку его какому-то царю Бахману. По положению моста относительно реки, следуетъ заключить, что онъ былъ выстроенъ надъ рекой, которая съ течениемъ времени изменила свое русло, вследствие чего мостъ остался въ стороне отъ реки, а отсутствие вблизи моста населенныхъ местъ сохранило его отъ окончательнаго разрушения человеческими руками. ...Достовернее, однако, всего, что мостъ этотъ, какъ и мостъ Худаферинский, былъ сооруженъ Шахъ-Аббасомъ Великимъ...”¹. Из этого упоминания, пожалуй, можно заключить, что мост был возведен в 4-3 веках до нашей эры и был отремонтирован в 17-ом веке.

¹ **Сегаль И.**, Елисаветопольская губерния. Впечатления и воспоминания, “Кавказский вестник”, Тифлис, 1902, № 5, с. 31.

SEVAKN BRIDGE

The bridge lies across the river Kondalan, on the border-line between Dizak and Varanda Districts of Artsakh Province, Metz Hayk, in the neighbourhood of Gharabulagh—the only village in Jebrail District that still remained Russian-populated as of the early 20th century. Despite the deep antiquity of this multi-span bridge, the earliest written record containing reference to it goes back to only 1902: “Within some two to three versts of the Russian [village of] Gharabulagh flows the river Kyondalan. At a distance of two sazhen of the river are preserved the remnants of a stone bridge deeply buried in grass. The foundation of this bridge is shrouded in the obscurity of historical times, and the local people do not remember any legends relating to the period it traces back to: some say it was erected by Alexandre of Macedonia parallel with the construction of the old bridge of Khudaperin over the river Arax; others attribute it to a certain King Bahman. The position of the bridge in relation to the river suggests that [initially] it was constructed over a river which later changed its channel; as a result, the bridge appeared some distance away from it. Thanks to the absence of inhabited localities in the neighbourhood of the bridge, it has escaped final destruction by man. ...It is, however, most probable that both this bridge and that of Khudaperin were built by Shah Abbas the Great...”¹ This record comes to suggest that Sevakn Bridge was erected between the 4th and 3rd centuries B.C. and was later repaired in the 17th century.

¹ **Segal, I.** Yelisavetpol Province: Memoirs and Impressions. In: *Kavkazski Vestnik*, Tiflis, 1902, No. 5, p. 31 (the original in Russian).

ԽԱՂԽԱՂԻ ԿԱՍՈՒՐՁ

Գտնվում է Ադրբեջանին բռնակցված Հյուսիսային Արցախի Չական գավառի տարածքում՝ ներկայիս Թուրքի շրջանի Յանխլի գյուղի արևելյան եզրին՝ Չական գետի վրա: Ծովի մակերևույթից ունի 110 մ բարձրություն: Կառուցման ժամանակն անհայտ է, սակայն կամրջախելերի ստորին շարվածքի վաղ միջնադարին բնորոշ կառուցողական և քարի մշակման առանձնահատկությունները բույլ են տալիս ենթադրելու, որ կամուրջն ավանդվել է մեր թվարկության առաջին դարերից՝ Խաղխաղի՝ Հայ Արշակունիների (66-428) արքայական ձմեռանոց եղած ժամանակներից: Հետագայում կատարված բազմաթիվ նորոգությունների շնորհիվ կանգուն է եղել մինչև Ի դարի սկզբները:

Դեռևս 1890 թ. բանահավաք Սարգիս Քամալյանը նշել է. «...Կամուրջը 3 ահագին կամար ունի և լայնահիստ սներ, որոնց մեջը դատարկ է, ծառայում է իբրև պահեստատեղի: Սեջտեղի ոտը երկու կողմից դռներ ունի: Կամուրջը խախտված է, չի բանում...: ...տեղը կոչվում է Խննալու կամ Խլխանա»¹:

1980 թ. մեր այցելության ժամանակ գետի երկու ափերին տակավին պահպանվել էին կամրջի աջափնյա և միջին խելերի մնացորդները: Հիմնամասերը կառուցված են եղել հավասար շարքերով ձգվող սրբատաշ բազալտի մեծակտոր քարերով, իսկ մյուս հատվածները՝ աղյուսով:

Թռիչքի երկարությունը 8,80 մ է, անցուղու լայնությունը՝ 4,23 մ: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40°49'59.18", E 45°40'40.49":

¹ Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ս. Քամալյանի ֆ., տետր № 1, VI-11, թ. 35: Ի դեպ, «Очерки по истории Азербайджана» անստորագիր հոդվածում գետեղված է կամրջի կանգուն վիճակը ներկայացնող լուսանկարը («Известия АН Аз. ССР», 1946, № 5, с. 95):

МОСТ ХАХХАГА

Находится на территории аннексированной Азербайджаном провинции Закам Северного Арцаха, на восточной окраине села Янхлы Тоузского района, на реке Закам. Расположен на высоте 110 м над уровнем моря. Дата постройки неизвестна, однако, присущие раннему средневековью особенности возведения и обработки камня нижней кладки опор моста позволяют предположить, что он дошел до нас с первых веков нашей эры — со времен, когда Хаххаг был местом зимовья армянских царей Аршакуни (66-428 гг.). Благодаря осуществленным в последствии многочисленным восстановительным работам, мост оставался в сохранности до начала 20-го века.

Еще в 1890 году собиратель-этнограф Саргис Камалян отмечал: «...У моста имеются три огромные арки и мощные опоры, в которых есть полости, служащие в качестве складов. В среднем изножии — по обе стороны — имеются двери. Мост расшатан, не действует... ..местность эта зовется Хнналу или Хлхана»¹.

Во время нашего посещения в 1980 году на обоих берегах еще сохранялись остатки правобережной и средней опор. Участки оснований были возведены ровными рядами кладки из крупных блоков базальта, а остальные участки — из кирпича. Длина пролета — 8,80 м; ширина проезжей части — 4,23 м. Географические координаты: N 40°49'59.18", E 45°40'40.49":

¹ Музей Литературы и Искусства им. Е.Чаренца (МЛИ), ф. С. Камаляна, тетрадь № 1, VI-11, л. 35 (на арм. яз.). Кстати, в неподписанной статье «Очерки по истории Азербайджана» есть фото неразрушенного моста («Известия АН Аз. ССР», 1946, № 5, с. 95).

BRIDGE OF KHAGHKHAGH

The bridge extends over the river Zakam, at the eastern extremity of Yankhli Village in present-day Touz District—Zakam District of Northern Artsakh, a region that suffered deportation of its Armenian population in 1988 and has been annexed to Azerbaijan since then—at an altitude of 110 metres above sea level. The period of its construction remains unrevealed, but the building and finishing peculiarities of the lower stonework of its piers are typical of the early Middle Ages, which allows us to trace it back to the first centuries of the Common Era, when Khaghkhagh still served as a place of winter residence for the Armenian kings of the Arshakid Family (66 to 428). Later the bridge repeatedly underwent overhaul, thanks to which, it was preserved standing until the early 20th century.


Folklorist Sargis Kamalian, who saw the bridge in 1890, writes the following about it: «...The bridge has three immense arches and broad-faceted walls which are hollow and serve as warehouses. Its middle pier has doors from two sides. The bridge is in a state of disrepair and does not function... ..the place is called *Kh[e]jnnalu* or *Kh[e]jkhana*.»¹

During our visit to the monument in 1980, we saw the remnants of its right-bank and middle piers still preserved on both sides of the river. It was entirely built of brick, except its main parts, which were laid with finely-dressed large blocks of basalt stretching in regular rows.

Span length: 8.80 metres; passage width: 4.23 metres; geographical coordinates: N 40°49'59.18," E 45°40'40.49."

¹ Yeghishe Charents Art and Literature Museum: **Sargis Kamalian** Fund, copy-book No. 1, VI-11, p. 35 (the original in Armenian). A photograph showing the bridge as standing can be found attached to an anonymous article in Russian entitled *Studies of the History of Azerbaijan* («Очерки по истории Азербайджана»). In: *Proceedings of the Academy of Sciences of the Azerbaijani SSR* («Известия АН Аз. ССР»), 1946, No. 5, p. 95.





1

ՊԱՐՏԱՎԻ ԿԱՍՈՒՐՁ

Գտնվում է պատմական Հայոց Աղվանքի մայրաքաղաք Պարտավ քաղաքատեղիում՝ մերօրյա Բարդա քաղաքի հարևանությամբ՝ Տրտու (Թարթառ) գետի հին հունի վրա: Ծովի մակերևույթից ունի 77 մ բարձրություն: Անտարակույս, հետագա դարերում բազմիցս նորոգված կամրջի հիմնադրումը հարկ է վերագրել Պարտավի ծաղկման շրջանին՝ Ե-Է դարերին¹: 1880-ական թթ. վերջերին վաղուց արդեն ավերված կամրջի մասին ականատեսը նշել է. «...170 մետր երկարություն, 5 մետր լայնություն եւ 16 աչք, որոնց կամարներն արդեն քանդուած են և մնում են միայն ոստերն և երկու կողմերի պատերն: Սրբատաշ եղած են բոլոր անկիւնաքարերն, իսկ անտաշ՝ մնացեալ քարերն: Ինչպէս վկայում են, ունեցած է հայերէն արձանագրութիւն, բայց անյայտացած է, չկայ այժմ...»²:

15 միջանկյալ և զույգ եզրային զանգվածեղ կամրջախելերի միջև 16 թռիչքներով ձգվող կամրջի մնացորդները, ըստ հետագա առավել վստահելի չափագրական տվյալների, ունենին միայն 4 մ անցուղու լայնություն և 120 մ ընդհանուր երկարություն³: Շինանյութը գետաքար և կրաշաղախ է:

¹ Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 217-218:

² Բարխուտարյանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 31-32:

³ Усейнов М., Бретаницкий Л., Саламзаде А., История архитектуры Азербайджана, Москва, 1963, с. 40.

МОСТ ПАРТАВА

Находится на территории городища Партав — столицы исторической области Армянской Албании, по-соседству с нынешним городом Барда, на старом русле реки Трту (Тартар). Расположен на высоте 77 м над уровнем моря. Безусловно, время строительства в последующие века неоднократно обновлявшегося моста восходит к периоду расцвета Партава, к 5-7 векам¹. В конце 1880 годов об уже давно разрушенном мосте очевидец писал: “...170 метров длины, 5 м ширины и 16 секций, арки коих уже обрушены и остались лишь изножии и стены обеих сторон. Все краеугольные камни были гладко тесаными, а остальные камни — нетесаными. Согласно свидетельствам имелась армянская надпись, однако ныне ее нет, она исчезла...”².

Остатки 16-типролетного моста, простирающегося на 15-и промежуточных и паре крайних массивных опорах, согласно дальнейшим достоверным обмерным данным, имели следующие параметры: ширина проезжей части — 4 м и общая длина 120 м³. Стройматериал — речной булыжник и известковый раствор.

¹ Карапетян С., Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха, Ереван, 2000, с. 216.

² Бархутарянц М., Арцах, Баку, 1895, с. 31-32 (на арм. яз.).

³ Усейнов М., Бретаницкий Л., Саламзаде А., История архитектуры Азербайджана, Москва, 1963, с. 40.

BRIDGE OF PARTAV

The bridge is situated over the old channel of the river Trtu (Tartar), in the neighbourhood of present-day Barda City, in the town site of Partav—once the capital of the historical region of *Armenian Albania* [a toponym used with reference to the historical districts of Artsakh and Utik of Metz Hayk (*Armenia Maior*), to differentiate them from *Caucasian Albania proper*, lying on the left bank of the river Kur]—at an altitude of 77 metres above sea level. Undoubtedly, the foundation of this bridge dates back to the period when Partav enjoyed prosperity, namely, to the 5th to 7th centuries (subsequently it repeatedly underwent renovation).¹ In the late 1880s, a traveller wrote the following about the monument, that had been long lying in ruins: “...170 metres long, 5 metres wide and 16 spans, whose arches are already destroyed, with only the piers and walls preserved on both sides. All its cornerstones seem to have been finely-finished, the other stones being undressed. It is said to have had an Armenian inscription, but it can no longer be found now...”²

The bridge of Partav represented a structure of 16 spans with 17 massive piers—2 terminal and 15 middle ones. According to the results of subsequent measurement conducted amidst the remnants of the bridge, it had a passage width of 4 metres and a general length of 120 metres—these figures are more reliable as compared to those adduced in the quotation above.³ The main building material used in the erection of the bridge comprises cobblestone with mortar.

¹ Karapetian, S. *Armenian Cultural Monuments in the Region of Karabakh*. Yerevan, 2001, pp. 204-205.

² Barkhutariants, M. *Artsakh*. Baku, 1895, pp. 31-32 (the original in Armenian).

³ Useinov, M., Bretanitski L., Salamzade A. *History of the Architecture of Azerbaijan*. Moscow, 1963, p. 40 (the original in Russian).

ՔԱՐԱՎԱԶԻ ՀԻՆ (ԽՈՒԴԱՓԵՐԻՆԻ) ԿԱՍՈՒՐԶ

